

տեառնես, որ օրհնութեան կոնդակ մը հանէ բոլոր Հայաստանի ժողովրդոց, զէն ի ձեռնի յարձակելու ընդդէմ անօրինաց, որ կը պատրաստուին մտնել աշխարհքս բնաջինջ ընելու համար քրիստոնէութիւն եւ հայութեան անունը, կը հրաւիրէ իւր սրբութիւնը գալ բնակելու Ս. Կարապետի վանքը մինչեւ պատերազմի վերջը, նուիրակներ հանելու ամէն տեղ, որ դրամ, ձի, զէնք, պաշար ժողուեն բոլոր Հայոց երկրէն եւ հոն հասցնեն, ուր որ հայ զօրքը կեցեր կը պատերազմին ընդդէմ անհաւատից, կը խնդրէ խոնարհաբար...

— Այս ի՞նչ խնդիրներ, այս ի՞նչ հրաւերներ են, որ այդ յիմար լեռնցի մարդը եկեր այստեղ այսպիսի ժողովքի մը կը համարձակի առաջարկել եւ մենք հազար անգամ աւելի յիմար կը լինինք եթէ այդպիսի առաջարկութեանց համբերենք: Մե՞նք երթանք Նստենք ամրոցները եւ մեր շինականքը զինուին պատերազմին որպէսզի զէնքերնին վաղը մեզի դէմ դարձնեն. եւ դուք այդպիսի խօսքեր լսելու համբերութիւն ունի՞ք:

Այս խօսքերը զրուցողը Գարդմանացուոց Կտրիճ իշխանն էր եւ արդէն ոտք ելնել եւ երթալ կուգէր, երբ զինքը խնդրանոք եւ բռնի Նստեցնել տուին: Իսկ Սմբատ Սպարապետ դարձաւ այն ատեն Յովնանու եւ ըսաւ խստութեամբ.

— Որովհետեւ մենք ներողամիտ գտնուեցանք, դու էլ դորայ փոխարէն համարձակութիւնը յանդգնութեան տարիր, եւ այսպիսի մեծ նախարարներ այդ խօսքերովդ նախատեցիր. եթէ իրօք այդպիսի խորհուրդներու կը համարձակին սասնեցիք, մեզ նախ պարտականութիւն կայ զիրենք պատժելու: Ուստի այդ քննութիւնքը մինչեւ որ կատարվին պետք է դու այստեղ պահուիս, վասնզի կ'երեւայ թէ դու ես այդ կարծիքները ժողովրդեան մէջ տարածող:— Պահապանք, այդ մարդը զգուշութեամբ պահեցէք:

Եկան զինուորներ եւ առին դուրս հանեցին Յովնան եւ իջուցին կաթողիկոսարանին բանտը, եւ վերը հայոց իշխանք եւ նախարարք Յովնանու խօսքերը մեկնելով սոսկալի հետեւանքներ կը հանէին